ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր և արխիվային փաստաթղթերի բաժին
N 0003 09 JAN 2017 ժամ 10:10
Կից
Նկատումներ
Դեղի կարգավիճակի

« 30 » դեկտեմբեր 2016 թ No 3884 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 17-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0101235016 առ 26.12.2016թ. գրությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել թվով 2 դեղերի գրանցման հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղի վերաձևակերպված գրանցման հավաստագրի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Ճշտ. 09.01.17 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ առողջապահության նախարարի
2016 թվականի դեկտեմբերի « 30 » - ի թիվ 3884 – Ա հրամանի

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

հ/հ	Առևտրային անվանումը	միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	դեղաձևը	դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)	արտադրող ֆիրման	երկիրը	գրանցման հավաստագրի իրավատեր	բացթողման կարգը	եզրակացության համարը
1.	Կորտեքսին	խոշոր եղջրավորների կամ խոզի գլխուղեղի կեղևի պոլիպեպտիդներ	դեղափոշի լիոֆիլացված մ/մ ներարկման լուծույթի	10մգ; (10/2x5) ապակե սրվակներ 5մլ	<Գերոֆարմ> ՍՊԸ, 196158 Սանկտ Պետերբուրգ, Մոսկովսկոյե շոսե, 13, լիտ. ՎԼ.	Ռուսաստան	<Գերոֆարմ> ՍՊԸ, 191119 Սանկտ Պետերբուրգ, Զվենիգորոդսկայա փ. 9, Ռուսաստան	Դ	12550
2.	Բետայոդին	պովիդոն յոդ	օճառ հեղուկ	75մգ/մլ; 80մլ պլաստիկե շշիկ, 140մլ պլաստիկե շշիկ, 1լ պլաստիկե տարա, 3լ պլաստիկե շիշ	Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19	Հայաստանի Հանրապետություն	Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19, Հայաստանի Հանրապետություն	ԱԴ	12535